

« ԺԱՆՆԷՂԻ » ՆԱԽԻՆ ԱՊՐՈՂ ԱՆՁԻՆՔՆ

(Տես Պր. Ա. էջ 69):

Ժանէղ անուամբ նաւուն ահաւոր տխրահանգիսին վրայ, արդէն Ա Պրա- կին մէջ խօսեցանք, քիչ ժամանակ էր որ հեռագիրն տուեր էր մեզի առաջին լուրերն ամերիկեան խուզարկուաց՝ վը- րայ, որոնք անհետ եղեր էին 1879ին սեպտեմբերէն — որ է ըսել երեսուն ամսէ՛ի վեր — և արդէն մեռած կը հա- մարուէին: Պիգոֆ գլխոյն հիւսիսային կողմը նաւակ մը գտնուած էր, ունե- նալով մէջը բեւեռային երեսուն նաւոր- դաց մետասանը միայն, որոնք պատմե- ցին թէ ինչպէս Ժանէղ խորտակուեր էր սառեալ վրայ ի 23 յունիս 1881, և նաւաստիք ազատեր էին երեք նաւա- կաց մէջ, որոնք նախ միաբան ուղղուե- ցան դէպ ի սիպերիական հեռու ծո- վափունքը, բայց յետոյ փոթորիկներէ, մառախուղներէ և սառերէ բռնուելով, զիրար աչքէ կորսնցուցին:

Այն ժամանակէն ի վեր հինգ ամիսք անցան, և նաւակոծելոյ ազատութեան վրայ յանկարծակի արծարծեալ յոյգն բոլորովին շիջան: Սիպերիական գլխա-ւոր գետոց բերանները եղած փութա- յան հետազօտութիւնք՝ ռուս վարչու- թենէն և ի Պենէզէ, տէր Նիւշ Եօրք Հերլյուի, որուն համար այս աղիտա- բեր ճանապարհորդութեան ձեռք զար- նուեր էր, անմխիթեալ արդիւնքներ ու- նեցան: Ժանէղի նաւակոծեալք — բայց ի Պիգոֆ գլուխը հասնողներէն — բռ- լորն ալ մեռան. մարտի 24ին գտնուե- ցաւ այն մակոյկն ուր ուղեւորութեան գլուխն, Գէորգ Տը Լոն նաւապետ, վեց ընկերներով ցամաք իւրէր էր — ամենքն ալ ի սովոյ և ի ցրտոյ մեռան, բեւ- ոային ձմեռուան երկար ամսոց միջոյ:

Ժանէղի մէջ կային, բաց ի Տը Լոնէ, երկու սպայք՝ ճոն Ուիլսըն—Տէնընհովր և կարոլոս Չիփ. երկրաչափն Մէլվիլ, բնադէտն Ռայմոնտոյ Նիւգոմպ, բժիշկն

Ամպլէր, Հերոնիմոս Գոլլինս՝ Նիւա Եօրք Հերլյուի թղթակիցն, և 22 նաւաստիք, յորս երկու նաւուղիքը, Տիւնպար ամե- րիկացի մը և չինացի մը: Մնացած մե- տասան ապրող անձանց ոմանք, յորս և երկրաչափն Մէլվիլ, մնացին յիր- քուգք, ի Սիպերիա, անխոնջ կերպով շարունակելու իրենց զժապոյ ընկերաց հետազօտութիւնը. այլք, որոնք աւելի առողջութիւննին կորսնցուցած էին, դառնալու վրայ են, կամ արդէն հասեր են ի Պետրպուրկ: Այս վերջնոց մէջ են Տէնընհովր, Նիւգոմպ, չինացի նաւու- ղիդն, և Գոլէ անուամբ նաւաստի մը, որոնք մեծաւ հանգիսիւ ընդունեցան ռուս ժողովրդենէն, և ամենայն մար- զասիրութիւն գտան: Խեղճ Գոլէ նա- ռաստին ցրտէն և տառապանքէն խել- քը կորսնցուց. ճանապարհորդութեան դարձին միջոց քանի մի անգամ մոյսեգին խենթութենէ բռնուեցաւ, բայց հիմոյ թուի թէ խնամքն և մեղմ կլիման ի- բեն վրայ լաւ ազդեցութիւն ըրեր են, այնպէս որ մեծ յոյս կայ թէ կրկնին իրեն մտաւոր կարողութիւնքը բոլոր- վին ստանայ:

Տեղակալն Տէնընհովր ծանր կերպով աչքի հիւանդութիւն ունի: Այլ ինքն ալ ազէկնալու ճամբուն վրայ է և բը- ժիշկը կ'ապահովցընեն որ թերեւ կա- բենայ բոլորովին ստանալ կորսնցու- ցած աչքը:

Չանազան օրագրոց թղթակիցներէ այցելութիւն ընդունելով, Տէնընհովր և Նիւգոմպ այլ և այլ ամենախարեօր ծրագիրներ տուին անոնց, զորս գծեր էին Ժանէղի ճանապարհորդութեան միջոց և անոր աղետաւոր նաւաբեկու- թենէն ետքը: Պատմեցին նաեւ անոնց՝ այն աղիողրմ ողիսականին քանի մը մասնական գէպքեր, որ բեւեռային խու- զարկութեանը պատմութեան մէջ զը-

ժրնդակադոյն էջերէն մէկը պիտի ձեռ-
ցնեն, այն որ արդէն ճոխ է աղետիւք :

Հազիւ թէ նաւորդը թողուցեր էին
զժականէդ (23 յունիս 1884), սառից վը-
րայ դէպ 'ի ցամաք ուղղուեցան : Դիւ-
րին բան չէ երևակայել այն վիշտերը՝ յո-
րոս այն քաջասիրտքն կը դիմադրուէին :
Բայց մէկուն ալ խրախոյսը չէր նուա-
զեր, այլ մանաւանդ թէ և ևս կ'աճէր
այն վայրկեաններուն՝ յորում վտանգը
աւելի ծանր, արկածը աւելի մօտա-
լուռք, ցրտոյ և անօթութեան նեղու-
թիւնը աւելի դժնդակ, մահն աւելի
մերձաւոր էին :

Յուլիս ամիսն էր, և անամպ արեւ-
դակ մը այն սառից անծայրածիր աշ-
խարհէն վրայ կը ծաւալէր իր լոյսը :
Շրացուցիչ սպիտակութիւն մ'էր, ա-
ռանց ստուերի մը գծի, մահահամբոյր
փայլատակում մը, կարող քիչ ժամա-
նակի մէջ կուրացունելու : Ուստի այն
տառապեալքն պէտք էին դիչերը աշ-
խատիւ և ցորեկը քնանալ : Այս կեր-
պով ըրած ճամբանին շատ կարճ էր .
օրը երկու կամ երեք քիլոմետր . այլ
խրախոյսը չէր պակսեր : Յուլիսի 9ին
հեռուն կղզեակ մը կը տեսնուի, որ յե-
տոյ կոչուեցաւ Պենէդի իսլանտ, այլ ան-
դէն միգին մէջ աներեւոյթ կ'ըլլայ : Հազիւ
հասան հօն նոյն ամսոյն 29ին ժայռուտ,
մերկ, ամպի կղզի մ'էր : Այն ինչ ցա-
մաք ելան նաւակոծեալք, կանգնեցին
հօն ամերիկեան դրօշը, և երկատասան
օր մնացին հօն, հանգչելու և ապրուստ
պատրաստելու համար, որսալով փո-
կեր, ճերմակ արջեր և բազեր :

Ճանապարհորդութեան միջոց գտած
կղզիներնուն՝ այն երրորդն էր : Արջային
միայնութեանց մէջ ուրիշ երկու կոր-
սուած ցամաքներ ելան և նշանակեցին՝
նախ քան զնաւակոծութիւնն՝ Ժաւնէդի
նաւորդը, որոնք ընդունեցան Ժաւնէդ
և Հանրիէդ անուանքը :

Նաւակոծեալք օգոստոսի 5ին շարու-

նակեցին սոսկալի ճամբանին սառից
վրայ, քարշելով իրենց նաւակները, ա-
զատ միջոց մը գտնելուն պէս ծովը
դնելու համար : Այսպէս հասան — մաս
մը քաշելով, մաս մը առագաստով նաւե-
լով, — Նոր Սիպերիոյ կղզիները 'ի վերջ
օգոստոսի, և սեպտեմբերի մէջ հասնը
էին Լենայի գետարեւանին մօտերը :
Ազատած կը կարծէին, — և կորուստ
էր : Ամառնային կարճ եղանակն ար-
դէն կը դիմէր դէպ 'ի ձմեռն : Յուրտն
նորէն սկսաւ, և անոր հետ սկսան ձիւ-
նիւն, մրրիկներն, ուժղին հողմերն :
Սառք դարձան խռնելու երկը նաւակաց
չորս կողմը, զանոնք մէկմէկէ բաժնե-
լով և հարուածելով, գիրեկը ջախջա-
խելու անդադար սպառնալիք : Սառի
կոտորոց սարսափելի բաղիւսիք՝ Մէլ-
վիլի և Տէնընհովրի նաւակին մէջ վը-
սանգաւոր ջրոյ ծակ մը բացին . խարս-
խեցին զայն մեծ սառի զանգուածի մը,
և զժուարաւ կրցան 'ի գլուխ հանել
դարմանոյ կարեւոր աշխատութիւնը :
Հազիւ փոթորիկն կարծուեցաւ թէ դի-
վեր է, նաւակոծեալք ճամբայ ինկան,
— այս անգամ միայն, — և բարեբաղ-
դութեամբ կրցան մտնել Լենայի գե-
տաբերանին մէջ : Երկրորդ նաւակը, ո-
րուն կը հրամայէր տեղակալն Չիփ,
մրրիկին ժամանակ խորտակեցաւ և թը-
շուառականքն ընկղմեցան . գալով եր-
րորդին, որ էր Տը Լոն նաւագետինն,
արդէն գիտեմք որ նաև ինքն ալ թա-
փառեցաւ Լենայի գետաբերանը, այլ
ապրողներն, չունենալով իրենց ընկե-
րաց բարեբաղդութիւնը, ձմեռուան
ժամանակ ցրտէ և անօթութեմ մեռան :

Համառօտիւ այսպէս եղաւ Տէնըն-
հովրի և Նիւգոմպի երկու կտրիճ խուզ-
արկուաց պատմութիւնն : Երկուքն ալ
մեկնեցան յԱմերիկա, ուր քիչ ատենէն
ամենաթշուառ ուղևորութեան ամբողջ
պատմութիւնը պիտի հրատարակեն :